05/15742-17
1/06.2/13189-17

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1411

«17» 11 2017 թ. ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի ԹԻՎ 566-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի մայիսի 23-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշումից բխող Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> թիվ 566-Ա հրամանի /այսուհետ՝ հրաման/ 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ .

<<4. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Դ. Կարապետյանին՝ ապահովել մասնակցությունը ՀՀ վարչապետի 2017 թվականի հուլիսի 4-ի N469-Ա որոշմամբ ստեղծված համակարգող խորհրդի նիստերին ու հանրային քննարկումներին և եռամսյակային կտրվածքով Մարդու իրավունքների

պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի՝ ՀՀ ԱԻՆ մասով միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցների ներկայացումը>>:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Դ. ՏՈՆՈՅԱՆ